



Մարդարէ ըլլալու պէտք չկայ. կը բաւէ ճառերու, լողունդներու խաժամուժին մէջէն իրականութիւնը տեսնելու, դայն չվանելու քաջութիւնը ունենալ, յանդելու համար այս տարազումին որ պիտի վերաբերի Երեւանին: Հասկցած էինք թէ մեր ներկային մէջ չէինք կրնար ներառնել «միացեալ»ը. ան մեր երազի անսպառ պաշարն էր. դայն ունէինք ա՛յս ձեւով: Սակայն ոչ ոք կը կասկածէր թէ երազին միանալու սարսնալիքին տակ կը դանուէր նաեւ այսօրուան Հայաստանը. ի՞նչպէս կասկածէր երբ իրրեւ թէ հետամուտ էինք այլ միացումներու. հետամուտ էինք երազէն պատառ մը կծոտելու, մինչդեռ այսօր այդ պատառը խայծ դարձած, մեզ կը քէ հոսանքն ի վար: Օր չանցնիր որ Ղարաբաղի շրջակայ բոլոր բնակավայրերը եւ նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջանները չմնան թշնամիին կրակին տակ: Ռուսներ, հրազունդեր կը թափին զիւղերէ կտք քաղաքներու վրայ, ամէն օր հայ մարդիկ, կիներ, երախաներ կը մահանան, շէնքեր կը փրչին, աւերումներու սահմանը կ'ընդարձակուի ու դաղթական բազմութիւններ ամէն օր աւելի խիտ շարքերով հաց, երգիք ու հետաքրքրութիւն կը փնտռեն: Այս բոլորին պէտք է պատասխանէ Հայաստանը որ ունի աղէտի գօտի, դաղթականներու հինցած այլ չլուծուած հարց, շրջափակում, բանակի տեղ «ինքնապաշտպանութեան ուժ», ձախողած զօրակոչ ու բանակիւններով, բացակայութիւններով յազեցած Խորհրդարան:

Այսուհանդերձ, լաչինն ու Շուշին ապացոյցը տուին թէ հնարաւոր էր գտնել ճարը՝ անկարելի նկատուածը կարելի դարձրնելու: Անհասկնալի մնաց սակայն այն պարագան որ նոյն ճիւղը չչարունակուեցաւ ու այսօր թշնամիին ուղիներուն ու ներթափանցումներուն դէմ դնելու հարկին տակ կը մնան տեղական կազմաւորումներ, երբեմն նոյնինքն բնակչութիւնը. ոչ ոք կը պատասխանէ օրինակ, Կապանի Եղվարդ գիւղէն կիներու երբ ուղիներու տարափին տակ հարց կու տան թէ վերջիվերջոյ ո՞վ տէր պիտի կանդնի իրենց: Նոյնն է դաղթականութեան պարագան որուն համար նուազագոյն ծրագիր մը չի պատրաստուիր, կամ աղէտի գօտին որ առհասարակ գոյութիւն իսկ չի գտներ պետական գործընթացին մէջ: Եւ հակառակ անոր որ Երեւանի Խորհրդարանը կազմած է Աղէտի գօտիի, Գաղթականութեան յանձնախումբեր ու նախագահներ, փոխ նախագահներ, նախագահի տեղակալներ նշանակած անոնց, աղէտեալն ալ, դաղթականն ալ պէտք է իրենք գտնեն իրենց գլխուն ճարը:

Անիրաւութիւնն է այս կարգի անդրադարձներ բանաձեւել իշխանութեան մը հասցէին որ ունի հազարումէկ գծուարութիւն թէ՛ ներսը, թէ՛ դուրսը. շա՞տ չարակամ բան կը նկատուի «ազատ, անկախ, միացեալ» սիրելի տարազին «միացեալ»ը «խտացեալ»ով փոխարինել: Ամէն անոնք որոնք ուժ կամ պատճառ ունին տակաւին հանդուրժելու կորուստներու հող, մարդ, արժանապատուութիւն, կրնան այդպէս մտածել: Բայց իրականութիւնը ամէն օր մատ մը եւս կը մօտենայ խտացեալի սահմաններուն, թէ՛ գուրսէն, թէ՛ ներսէն: Կը մօտենայ՝ Ղարաբաղի մէջ ամէն օր կորսուած զիւղերով, կեղբոններով, որոնցմով ամէն օր քիչ մը եւս կը կծկուին անոր սահմանները. կամ կը մօտենայ տակաւին, երեւանի շեշտակի ինքնակեղբոնացումով որ հետզհետէ դրացիի նման բաներու կը վերածէ Գիւմրին ու Մեղրին, Կապանն ու Տաուշը:

Ըսի. կարելի է անիրաւութիւն կամ չարապահութիւն նկատել նման դատումներ. միայն, ատիկա ընելու համար պայման է որ թեկնածուները գոնէ իրենք իրենց համոզիչ մեկնարանութիւն մը տան «Արմէնփրէս»ի Սեպտեմբեր 4 թուակիր հետեւեալ հարցրումին.

«Աւելի քանամիսէ մը ի վեր վրաստանի կազմաւորումը Հայաստան կը ստանար 7

Ռուսաստան Սահմանադրութիւն չունի. ոչ ալ յատուկ անցագիր որ միայն իրեն պատկանի. ազգային փառերը անխօս մեղեդի է եւ սահմաններն ալ յարատեւ վէճերու առարկայ. այս բոլորին վրայ կ'աւելնայ նաեւ արտաքին քաղաքականութեան բացակայութիւնը: Այս մարդին մէջ պէտք է դանազանել յարաբերութիւնները՝ նախկին խորհ. Հանրապետութիւններուն եւ աշխարհի միւս շրջաններուն հետ: Անշուշտ ստաջիններուն հետ կապերը աւելի անմիջական են ու տարրեր բնոյթ կը կրեն: Ռուսին կը մնայ այս ոլորտին հասարակաց դրամը եւ սահմանները բաց են. նոյնիսկ տակաւին բաժանումը չէ կատարուած միութենապատկան ժառանգութեան:

Այսուհանդերձ, մերժուած են բոլոր յանձնարարութիւնները որոնք կը միտէին ռուսական կառավարութեան մէջ տեղ տալ յատուկ նախարարութեան մը որ ըզրազէր միայն նախկին խորհ. Հանրապետութիւններով. կը տիրէ այն կարծիքը թէ ատիկա Յեղափոխութենէն առաջուան քաղաքականութեան ուրուականին պիտի նմանէր:

Խորհ. Միութիւնը ունէր իր դաշնակիցներն ու հակառակորդները. անոնց դանազանումը կ'ըլլար գլխաւորաբար ընկերային դադախարականին հիման վրայ եւ կը վայելէր հզօրագոյն բանակի մը հովանաւորութիւնը: Այսօր Արտաքին նախարար Կոզիրեւի համաձայն, Ռուսաստան կ'ուզէ մաս կազմել զարգացած ժողովրդավար երկիրներու աղումին. այդ ամբողջութեան մէջ ընդունուելու համար Մոսկուա ջանք չի խնայեր, միակ բացառութեամբ մը: Հակառակ պահանջներու, չի համաձայնիր 1992 Մայիսին Հրեղկաստանի հետ կնքուած 200 միլիոն տոլարի զինամթերքի վաճառքի համաձայնութեան դրժել: Այդ վաճառքը յատուկ իմաստ կը ներկայացնէ Ռուսաստանի քայքայուած տնտեսութեան համար:

Չէնքի վաճառքը Մոսկուայի եւ Ռաչինկիթրի միջեւ կրնար անհամաձայնութեան պարագայ մը ըլլալ. սակայն երբ Ռուսաստան որոշեց զինական իր ճարտարարուեստը ոչ ռազմական նպատակներու ծառայեցնել, Միացեալ - Նահանգները ապահովութիւն ունեցան թէ անցեալին վերադարձ մը բացառուած էր: Սակայն հսկայական այդ ճարտարարուեստին վերափոխումն ալ մեծ գումարներու հարց էր: Ապա կար երկրին տարադրամի պահանջքը զոր կարելի էր դէնքի վաճառքով զիմադրուել: Այս գործառնութեան մէջ ալ փոփոխութիւններ կան. այսօր իրանն ու Չինաստանը կը նրկատուին գլխաւոր յաճախորդները:

Մոսկուա Եուրոպալիոյ տարնապին մէջ տառացիօրէն կը հետեւի ամերիկեան քաղաքականութեան. կիրարկուած ամբողջական շրջափակումը նոյնիսկ կը քրննադատուի, այն առումով որ ժողովրդա-

միլիոն խորանարդ մեթր կազ: Որոշուած էր որ այն պարագային որ հասած կազի քանակութիւնը եթէ անցնի այդ ցուցանիշէն եւ հասնի գոնէ 7,2 - 7,3 միլիոնի, կազին մէկ մասը կ'ուղարկուի Ադէտի գօտի՝ Գիւմրի, Սպիտակ, Վանաձոր որ երկար ատեն մնացած էր առանց այդ կարեւորագոյն վառելիքի:

Սակայն "Հայգազարդ" արտադրական միաւորումէն ստացուած տեղեկատուութիւնը առ այժմ չի կրնար ուրախացնել այդ շրջաններու բնակիչները: Կազի հոսքը դէպի Հայաստան նուազած է. Օգոստոս 31-էն ստացուած է 6 միլիոն 348 հազար, Սեպտեմբեր 1-ին 6 միլիոն 684 հազար խորանարդ մեթր, Սեպտեմբեր 2-ին՝ նոյն քանակութեամբ: Ադէտի գօտին կը շարունակէ սպասել...: